



25989

3552



LIBRARY
UNIVERSITY OF CALIFORNIA
DIVERSITY
LIBRARY

383

358

ՆՈՒԷՐ
ԿԱՂԱՆՈՒ


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ա Լ Վ Ի Ն Ա Ի

ԹԱՐԳՄԱՆԵԱՏ

ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

58657



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

— 1874 —

ՄԱԼՎԻՆԱ



Տղաքներ, ժամանակաւ կապոյտ աչերով,
ոսկեթել մազերով, գեղեցիկ և բարի աղջիկ մը
կար, որն որ այնչափ առաքինի և չքնաղ էր,
որ բոլոր այն երկրին մէջ և մինչև իսկ քսան մը
ղոն հեռու տեղուանք Գեղեցիկն Մալվինա կ'ան-
ուանէին զայն :

Մնտառի մը մէջ միայն կառուցուած դըզ-
եակի մը մէջ կը բնակէր բազմաթիւ ծառանե-
րով, որք էր նա թէպէտև՝ բայց ոչ ոք զայն այն-
պէս կ'ենթադրէր . իր կաթնատուն և հինաուրց
ծառաները զայն այն աստիճան խնամքով և գը-
թով պատասպարած էին որ շատ քիչ կ'ըզգար
նա իւր վատաբաղդութիւնը . այսու ամենայնիւ
ներքին ձայն մը միշտ կ'ազդէր անոր՝ որ օր մը
իր հայրն ու ամենասիրելի եղբայրը տեսնելու
երջանկութիւնը պիտի ունենայ :

Օր մը Մալվինան իր դղեակին մէջ գտնը-
ւած լայնատարած պարտեզին մէջ կը շրջէր, ծա-
ղիկներ կը քաղէր, որոնցմով մօրը շերիմն պը-



30512

սակներ կը հիւսէր . կ'երգէր զուարթութեամբ և կը զարմանար խատուտիկ միջատաց և գունաւոր թիղեռնաց վրայ՝ զորս այնչափ կը սիրէր՝ մանաւանդ անոնցմէ բնաւ չէր որսար , ինչպէս որ գուր շատ անգամ որսալով փայտեայ պղտի վանդակներու մէջ կը դնէք , և կամ ձեզմէ չարերը իրենց երկայն դնդասեղներովը այն խեղճ անասնիկները կը վիրաւորեն , և կամ երբեմն պատկերաց շրջանակներու մէջ իսկ անոնց նկարը կը զետեղէք :

Մալվինան ձգած էր զանոնք թռչելու և ոստոստելու . միայն գեղեցիկ բազէ մը ունէր իր բազկաց մէջ , որուն գարնանային և անուշ օդ մը շնջել կ'ուտար :

Մալվինա յոգնելով պզտի բլուրի մը վրայ ելաւ , ուրկէ կը դիտէր բոլոր մօտակայ երկիրները . յանկարծ կայծակէն տապալեալ կաղնիի մը կոծղին վրայ նստած մարդ մը տեսաւ , որն որ խիստ տրտում կերեւար , մինչ իսկ այնպէս երեցաւ թէ կ'ուլար . ասոր վրայ Մալվինային փոքրիկ և դիւրապագաց սիրտն 'ի գութ շարժելով , շտապաւ պարտեղէն գուրս ելաւ դէպի օտարականը ընթանալով , և երբ հասաւ անոր քով , իր ձեռքը բռնած ծաղկափունջը՝ որն որ վայրի կակաչով և մարգագետեայ ծաղկով ու հովտաց շուշաններով կապած էր անոր տալով

քաղցր ձայնով մը հարցուց՝ թէ արդեօք ինչո՞ւ կուլարք , եթէ նօթի էք՝ հաճեցէք ինձ հետ դըղեակը դալ , որ հոն զձեզ կերակրեմ . իսկ եթէ ծարաւ՝ կը փութամ ձեզ համար սիրելի այծս կլթել . ուրեմն եկէք հանդէպէք մեր տունը , ուր աւելի հանգիստ պիտի ընէք քան թէ այս ծառին վրայ :

Ծերունին խանդաղատանօք կը լսէր այս մխիթարական քաղցր խօսքերը , ուստի իր շընորհակալութիւնը յայտնեց անոր ըսելով , թէ ո՛չ նօթի եմ և ո՛չ ծարաւ . յետոյ պատմեց անոր թէ քիչ մը առաջ երբ իր տիրոջը հետ Պաղեստինաէն կը վերադառնային՝ զայն կորսնցուցած էր այս համր անտառին մէջ , նոյնպէս աւելի ևս թշուառ եղած էր իր քսակին կորսուելովն՝ վասնորոյ չէր կրնար իր ճամբան շարունակել :

Մալվինա այս լսելուն պէս , ոսկիի կտոր մը տուաւ ծեր զինակիր Սլենին՝ որն որ քսակին պարունակութիւնն էր , երբ նկարագրեց նաև ծերունին լուտովիկին որպիսութիւնը , անմիջապէս Մալվինա վրա բերաւ՝ թէ ինքը քիչ մը առաջ տեսած էր ճիշտ իրեն պատմածին պէս երիտասարդ մը , որն որ սպիտակ և գեղազարդ ձիւ մը վրայ նստած՝ դաշտին ճամբաէն կ'երթար . ասոր վրայ Սլեն այն ծեր զինակիրը պա-

գաւ Մալվինաին ձեռքը՝ որ զինքը այսպէսնոր
 և յուսալից զօրութիւնով մը լեցուց , և յետոյ
 ընկերացաւ այն դեռահաս աղջիկան՝ բոլոր իր
 կրած յոգնութիւնները մոռնալով , կ'ընթանա-
 յին ի միասին զուարթութեամբ խօսակցելով :

Մալվինան կը զարմանար այն սքանչելի վայ-
 րերուն վրայ , իսկ Ալեն ուշադիր կ'ըլլար . շու-
 տով մը Մալվինա սթափելով աղաչեց Ալենին
 որ հաճի պատմել իրեն այն երկրին վրայօք՝
 ուր ինքն ալ ընկերացած էր իր տէրերուն հետ .
 երբ անոնք ապստամբներուն վրայ պատերազմի
 կ'երթային , Ալեն առանց դժկամակութեան հա-
 ճեցաւ պատմել անոնց պատմութիւնը :

Իմ տէրս կոմսը Պաղեստինի մէջ էր դեռ ,
 ըսաւ Ալեն , երբ այն Ասպետը՝ որուն ես ընկե-
 րացած էի՝ արիւնարբու պատերազմի մը մէջ
 իր կեանքը կորսնցուց , ես ալ վիրաւորեցայ
 զայն պաշտպանելու համար . կոմսը Սառազե-
 նին արդիւնց գլուխս կտրելու , ու հոգաց ինծի
 հանգստեան տեղի մը տալով . իբր հարազատ
 եղբայր խնամեց զիս՝ խեղճ խաչակիր զինուորս .
 Պարոն Լուտովիկ շատ անգամ գլխուս վերև
 նստած կ'անցունէր իր ժամանակը . վերջապէս
 առողջութիւնս վերստացայ ի շնորհս իւր առատ
 խնամոց . կոմսը զիս իր օրգւոյն զինակիր ընե-
 լու շնորհն ըրաւ . այն ատենէն 'ի վեր է որ հա-

րիւրաւոր պատերազմներու մէջ միացած էի ա-
 նոնց հետ . կռիւներ և սարսափելի ճակատա-
 մարտներ՝ որոնք խիստ երկայն պիտի ըլլան ձե-
 զի պատմելը ո՛ր Աշնիւ Օրիորդ :

Չար Սրաբացիք մեծ վախ ունէին կոմսէն ,
 վասն զի անոր աներկիւղ քաջութիւնը և դիւ-
 ցաղնական կորովութիւնը հուշակուած էր ընդ-
 հանուր բանակին մէջ , միանգամայն կը զարմա-
 նային անոր գթութեան և բարերարութեանը
 վրայ :

Օր մը կոմսը քանի մը ասպետներու հետ
 ընկերացած Նրուսաղէմէն կը վերադառնար ,
 յանկարծ խուճի մը Սարակինոսներէ պաշար-
 ուեցաւ՝ իր պահանորդները սպաննուեցան , բայց
 ինքը քանի մը դիւցաղնական քաջութիւնները
 նեղէն յետոյ ձերբակալուեցաւ , բոլոր Գաղղի-
 ական բանակին սիրտը կտրեց այս գոյժը , Պա-
 րոն Լուտովիկ յուսահատեցաւ առջի բերան ,
 բայց իր բնական քաջութիւնը շուտով վերըս-
 տանալով , ժողովեց բոլոր իր ոսկիները ու ա-
 դամանդները՝ զոր հայրը ձգած էր իրեն և գը-
 նաց զանոնք տալու 'ի վրկանս իւր հօրը . ես ալ
 անոր հետ գացի , հասանք մինչև Սալատինին
 երբ երիտասարդ Տէրս իր առաջարկութիւնը
 ներկայացուց , ես ալ ոչ սակաւ ջանիւք յորդո-
 րեցի խոնարհաբար զանոնք որ դեռահաս տի-

րոջս խնդիրը չը մերժեն . Սալատին հաճեցաւ գրկեց Քրիստոնեան և զայն խնդակից ըրաւ որ զիական մեծարանօք . կոմսը պատժական ծանրը շղթայներով ծածկուած մեր առջև բերուեցաւ : Լուտովիկ վազեց իր հօրը և պագնելով անոր ձեռքը՝ հաղորդեց անոր իր ազատութեան լուրը , և իբր վկայ ցըցուց հօրը՝ իրեն համար վճարած տուգանաց ընկալազիրը : Յուզեալ հօրը աչերէն արտասուաց խոշոր կաթիլներ կը սահէին , որոնք որդւոյն խարտիշեայ նուրբ խոպոպիկներու վրայ լինալով զանոնք կը թրչէին , նոյնպէս զեղու սրտով իմ ձեռքս ալ սըխմեց . չուզեց Սալատին մեր զոհը ընդունիլ ուստի նշան ընելուն պէս անոր գերի կալանաւորները վերուցին շղթաները , բերին այն փայլուն զէնքերը՝ որոնցմով զինուեցաւ :

Սալատին իր զարմանքը յայտնեց կոմսին առաքինութեանը վրայ և որդւոյն մեծարանաց որ կը ցըցունէր իր մեծ գերեաց վրայ : Զանոնք մեծ հացկերոյթով մը պատուելէն յետոյ՝ մինչև Քրիստոնէից կեդրոնատեղին առաջնորդեց զանոնք :

Մեր Տէրերը չ'ուզեցին այլ ևս պատերազմիլ այսպիսի վեհանձն թշնամիի մը հետ , և այն դաշը որ կուեցին այլ ուստեք կատարուեցաւ , որովհետև Երուսաղէմ յազթող Քրիստո-

նէից կը պատշաճէր , և որ Գաղղիացի աղնուական մարտիկ մը կոնդուպրետտուը թագաւորեց հոն , Եգիպտոսի Պետին տեղ , վասնորոյ մենք տեղեկացանք անկէ . կոմսը մեծ իշխանին տունը կեցաւ , իսկ Պարոն Լուտովիկ և ես տիրոջս գղեակը փնտուելով մտըրեցանք . առժամայն Մալվինա յուսահատական ձայնով մը զինակիրին հարցուց գղեակին և ասպետին անունը . անմիջապէս պատասխանեց Ալեհը շնորհակալ ըլլալով իր առաջնորդուհիէն . մեկնեցաւ նորէն իր տէրը գտնելու փափաքով . բայց Մալվինա աշխատելով բլուրի մը վրայ ելաւ՝ հեռուէն վարանմամբ նշմարեց ձերմակ ձիի մը վրայ նըստած ասպետի մը խոյրին փետուրները , նոյնպէս զարմացաւ տեսնելով երիտասարդ մը , որուն նայելով բնաւ աչքերը չէին տաղտկանար . որովհետև այդ օտարականը իր եղբօրը կը նըմանէր , որն որ Սուրբ Տեղեաց համար պատերազմի գացած էր , մինչդեռ ինքը խիստ փոքր էր ու հազիւ կրնար պտըտիլ . բայց աւաղ որ իր հայրն ու եղբայրը կորսնցուցած կը կարծէր նաւաբեկութեան մը ատեն , և այս սուկալի գոյժը իր մօրը մահ պատճառած էր :

Մալվինան տեսաւ Պարոնը որ կը մօտենար չար և մազոտ վայրի ճիւղաղի մը՝ որուն մարդիկ կը յանդիմանեն իր կախարդութեան եպերելի

յանցանաց համար, ճանապարհորդը անշուշտ հարցուց անոր՝ թէ Ալեքը տեսա՞ւ, և աղաչեց անոր որ նոյն ճամբան իրեն առաջնորդէ. կախարդը հեգնական և նախատական պատասխան մը տուաւ Ալեքին. իր դառնասիրտ և նախանձոտ բնաւորութեամբը զօրաւոր և մենամարտելու կարող կը ձեացընէր, իր խստելի կերպարանքը և զազիր տգեղութիւնը, չքնաղ երիտասարդի մը գեղեցկութեամբը կը համեմատէր, վհուկը ուզեց արարքով մը վրէժխնդիր ըլլալ վասնորոյ բոլորովին հակառակ ճանբայ մը ցըցուց, որուն հետեւիլ կը պարտէր. բայց ասպետը վհուկին չի վստահելով սպառնացաւ անոր վրայ իր սրովը. սակայն ճիվազը երջանիկ գտնուեցաւ, վասն զի հեգնական ժպիտով մը փախաւ:

Մալվինան ցաւեցաւ որ Ալեքին գալը Ասպետին յայտնելու համար չի կրցաւ սպասել. մեծ յուզմամբ ձգեց այն կանաչագեղ և ծաղկալից բլուրը, կրկին իր ստնտուին վերագառնալու, ինչու որ երկար բացակայութեամբ մը կրնար անոր տաղնապ պատճառել:

Մալվինան իմացաւ անմիջապէս որ անտառին մէջ մոլորած էր. ուստի ամին շանք 'ի գործ դրաւ կրկին իր ճամբան գտնելու համար, բայց 'ի զո՛ւր. ճանբայ մը բռնեց, քիչ մը ետքը թողուց զայն ու կրկին գացած տեղէն ետ

դարձաւ կամաց կամաց, այն մացախուտ անտառին մէջէն, որուն ընթացքէն եղնին ու այծեամբ որը հոն կը գտնուէին կը խուտախն:

Օրը վերջանալու մօտ էր, անօթութիւնը զգալ սկսած էր Մալվինան. բայց իր քաջասրբութեամբը բնաւ չի լացաւ, ինչպէս կրնեն շատերը երբ այսպիսի պարագաներու մէջ գրանուին: Մալվինան շատ մը անուշահոտ ելակներ, մորենի և սննդարար կաղիմներ ժողվեց, որոնցմով մեծ պաշար մը կազմեց. յետոյ զանոնք ամենն ալ տեղաւորեց, վերջապէս տեսնելով որ գիշերը մօտեցաւ, որոչեց անտառին ամայի կողմը անցընել նոյն գիշերը, յուսալով որ յաջորդ օրը վերստին իւր ճանբան կը գրանէ, կամ թէ իր բացակայութենէն մտատանջուած ծառաներէն կը գտնուի. ուստի մեծ աշխատութեամբ ծառոց տերեւներէն անկողին մը պատրաստեց և խիստ ջերմեռանդութեամբ (իբր թէ իր սենեակը եղած ըլլար) աղօթելէն յետոյ քնացաւ:

Յաջորդ օրը Մալվինան թռչնոց վաղայարոյց երգերովը արթնցաւ, որոնք արևին ծագումը կ'ողջունէին, նոյնպէս միջատները իրենց այգուց օրհնութիւնները կը բղխէին, և դալարեաց թեւերն իսկ ըստ ինքեանց կը սառորէին, որոնց կը մրցէին կարծես բաբտիք, կաղնիք և

օրենիք՝ որոնք իրենց երկայնաձիգ գաղաթները մինչև երկիր խոնարհեցընելով, զիրենք ստեղծողին փառք կուտային, այս միջոցին Մալլինան ալ իր աղօթքները բնութեան համատարած ձայնին հետ խառնեց, և ապա կրկին իր ընթացքը շարունակեց. բայց խիստ շատ կը փափաքէր որ կամ առուակ մը և կամ աղբիւր մը գտնէ, որոնցմով լուա և զովացընէ իր երած և ուռեցած ոտքերը, որոնք ֆուսուած էին անտառին փշալից և դժուարակիր ճամբայէն. այս յուսով երկար շրջան մը ըրաւ. բայց բարեբաղդաբար լսեց վերջապէս ջրի քաղցր խննջուն մը՝ որուն քով հասնելու չ'ուշացաւ. հոն ապառաժ քարայրին և յստակ լիճին մէջ գեղեցիկ պօր մը կը պտըտէր վայելչապէս. մօտեցաւ տառապեալ երիտասարդուհոյն, որն որ ամայի քարանձաւի մը վրայ նստած կ'արտասուէր լուութեամբ. հարցընելով միանգամայն թէ արդեօ՞ք այսպէս միայնակեաց ըլլալու դատապարտուած է՝ ուր կ'ըսէր թերևս կեանքս ալ կորանցունեմ:

Յետոյ սկսաւ կամաց կամաց իր թախծութիւնը սփոփել այն փայլուն գայլախաղներովն՝ որոնք առուակին եզերքն կը գտնուէին. իր ուշագրութիւնը գրաւեցին նաև այն փոքրիկ ձուկերը՝ որոնք կը լողային խաղալով այն թափան

ցիկ առուակին մէջ, ուր ինքն ալ սկսաւ լողնալ և կատակներով խաղալ այն մարդասէր և գեղեցիկ պօրուց հետ:

Մալլինան վայրենի պտուղներ և պտղալի կաղնիներ գտաւ՝ որոնցմով կրնար իր անօթութիւնը յազեցընել. շինականաձև անկողին մը պատրաստեց հոն ու այն տեղ հեշտական գիշեր մը անցուց. քաղցր անուրջներ եկան զինքը իր վշտաց մէջ մխիթարելու. իր մայրը երազեց, որն որ հայրն ու եղբայրը կը ներկայացընէր իրեն, և որ այս վերջինը անտառին մէջ տեսածներուն կենդանի նկարը կը կրէին. յաջորդ առաւօտուն Մալլինան ինքզինքը մխիթարուած և զօրացած գտաւ իր երազներէն:

Լճին եզերքը բուսած ուռենեաց թելերով վը գեղեցիկ ու պղտիկ կողով մը շինեց Մալլինան, որն որ պտուղներով և խեցմորթիներով լեցուց և բոլոր նոյն օրը մերձակայ դաշտերը լրտեսելով անցուց, երեկոյին կանուխ պառկեցաւ. վասն զի անոր փափուկ ոտքերը կապուտցած էին ու զինքը շատ կը նեղէին. այն գիշերը բնաւ հանգիստ չի կրցաւ ըլլալ, որովհետեւ ջերմի և տագնապի մէջ էր, մանաւանդ որ երկնից որոտալովն ու կայծակներու փայլակներովը բոլորովին սրտադողի մէջ ընկած էր. առաւօտ եղածին պէս վերջին հրաժեշտ տուաւ

այն գեղեցիկ պորին՝ որն որ իրեն բարեկամա-
ցած էր և նորէն ճանբայ ելաւ :

Այնպէս թուեցաւ Մալվինան որ իր բըն-
տըռած ճանբան գտաւ , նաեւ այնպէս կարծեց
թէ քիչ հեռու պիտի տեսնէ իր գղեակը . ուս-
տի ինքզինքը երջանիկ սեպելով՝ սկսաւ իր ձայ-
նըն ալ շկահաւուց և սոխակաց ձայներուն հետ
խառնել , և մրցիլ իսկ անոնց հետ . բայց յան-
կարծ սոսկումէն գրեթէ քար կտրեցաւ , երբ
թաւուտ և անել անտառէն դուրս ելնելով՝ կըր-
կին դաշտավայրի մը մէջ մտաւ . այն ատեն մա-
զերը ցնցուեցան , ոտքերը սկսան դողալ , շըր-
թունքն իսկ չէին կրնար ձայն մը հնչել , մա-
հաբեր գեղնութիւն մը պատեց իր գեղեցիկ
դէմքին վրայ . ի՞նչ է ուրեմն իր զարհուրանաց
պատճառը . — անտառին վհուկը հոն իր քա-
րանցաւին վրայ նստած է , որն որ բոլոր երկրին
մէջ ամբաստանուած էր իր անհնարին նրբու-
թեամբը և անգթութեամբ ամենափոքր տղաք-
ները մեռցնելուն համար : Մալվինան իր կո-
րուստը զգաց և իր կապուտակ աչերը դէպի եր-
կինք վերցընելով Աստուած ու իր մայրը օգ-
նութեան կանչեց :

Վերջապէս եկաւ անոր քով , Մալվինան
ուզեց փախչելու փորձ մ'ընել , բայց վհուկը
ղայն տեսաւ . մի՛ շարժիր տեղէդ ձայնեց անոր ,

իր անը անոր ազդեւելով , և շահինս քու վրայ կը
ձգեմ , որն որ անմիջապէս աչքերդ պիտի խլէ ու
բոնց վրայ դուն այնչափ կը պարծենաս . ի՞նչ
ընել եկար դու հոս . ինչո՞ւ համար առանցնու-
թիւնս կը վրդովես . անշուշտ դու հոս զիս լըր-
տեսելու և իմ թշնամեացս մատնելու եկած ես :
Ո՛չ , ո՛չ աղաղակեց Մալվինան , ես անտառաց
մէջ կորսուած եմ , կը պաղատիմ , ուղղեցէք ճան-
բաս և ձգեցէք ինձ վերադառնալու վայլմանս
թեանի գղեակը . խիստ շատ հեռի եմ ձեզի չա-
րիք ընելէ , և պիտի տամ ձեզի ինչ որ խընդ-
րէք ինձմէն :

Է՛հ , ըսաւ տղեղ վհուկը իր վտիտ ձեռ-
քերը մազոտ սրտին վրայ խաչածեւ դնելով , է՛հ՝
դուն պղտի բերդակալ Մալվինան չե՞ս , որ ամեն
տեղ քու գեղեցկութիւնդ ու զգաստութիւնդ
կը դրուատեն , դու ոչ այլ ինչ ես , եթէ ոչ ինք-
զինքդ սիրցընելու և յարգ գտնելու էակ մը .
մինչդեռ բոլոր աշխարհք զիս կատեն , զիս կը
վախցընեն և երեքժանիի հարուածով զիս կը
հալածեն . ուստի դիտցիր որ ես այնչափ չար եմ
որչափ չեմ ժանտատեսիլ , մի՛ յուսար ուրեմն որ
դուն զիս 'ի դութ պիտի շարժես քու արտա-
սուքներովդ և աղաչանքներովդ , դու անձամբ
եկար իմ ճերմանացս մէջ իյնալու . իմ փոքրիկ
գառնուկս , ես զքեզ աղէկ պիտի պահեմ , հան-

գիտտ եղիւր, զուր տեղը ինքզինքդ ազատելու փորձ մ'ընենր, որովհետեւ հաւատարիմ ընկերս և ես քու փախուստդ պիտի խափանեմք և անմիջապէս զքեզ կը լափեմք :

Մալվինան ալ աւելի դողալով և զարհուրելով առատ արտասունք կը թափէր առանց աղաչանաց բառ մը իսկ հանելու իր տոճոյն շրթունքներէն . մտօք միայն կ'աղաչէր, ուժգին կ'ըզգար . որովհետեւ բոլորովին մինակ ձգուած չէր այն չար վհուկին կամացը՝ այլ Աստուած և իր մայրը կը հսկէին անոր վրայ :


Վհուկը իր առջևէն քայել տուաւ Մալվինան, որուն առաջնորդեց իր յուռի խրճիթը և հրամայեց անոր ունկնդիւր ըլլալ բոլոր իր պատուէրներուն . յետոյ մեկնեցաւ անիկայ աւելի ծանր սպառնալիքներ ընելով անոր, որպէս զի չըլլայ թէ փախչելու փորձ ընէ . ուստի աւելի վստահ ըլլալու համար խրճիթին դուռը կրկին կղպեց անոր վրայ, և դրան քով կատարի շուն մը դրաւ պահապան, որ եթէ խեղճ աղջիկը փախչելու պզտի փորձ մը ընէ՝ զայն փզըքաէ իր վայրագ ակռաներովը . այսպէս վհուկը ապահովեալ սկսաւ ձեռքերը շփել իր քստմանի ու ճիւղներուն վրայ ծանր յանցանք մը ևս աւելցընելուն վրայ ուրախ ըլլալով, և գնաց նորէն ասպատակութեան :

5852

Արդ՝ ձեզի կըսեմ ընթերցող պարոններ, վհուկը ճշմարտութեամբ եղած բան մը չէ . որովհետեւ ասանկ գոյութիւն մը չիկայ . միայն թէ ցնորքէ և յիմարութենէ յառաջ եկած է :

Անիկայ այնչափ յաջողակ, խորամանկ և չար էր որ՝ բոլոր շինականները, հովիւները և փայտահարները միշտ կը հալածէին, և կը հաւատային անոր՝ զայն սատանին հետ բաղդատելով : Իր ահը ու խորամանկ նենդութիւնները տարածելու և զանոնք դիւրաւ 'ի գործ գնելու համար իր հետ ունէր միշտ բու մը, շահին մը և քան զինքն վայրագ շուներ, որոնք ամենայնիւ հպատակ էին իր վատթար կամացը . իր վատիտ և երկար ձեռքերը՝ որոնց անչափ եղունգները մագիլ մը կը կազմէին, իրօք անոր զգուշի կերպարանք մը կուտային . այսպէս ահա մարդիկ անոր մօտենալէն կը դարչէին և մայրերն իսկ անոր վրայօք շատ գէշ կը խօսէին իրենց բազկաց մէջ եղած տղաքներուն, հաստատելով թէ ամեն չարիք անորմէն կը յուսացուէր :

Սոյնպէս դուք սիրելի պատանիք, ձեր մարցքովերը կ'ապաստանիք երբ քանի մը վտանգներ ձեզի սպառնան . հոն, այսինքն՝ նոցա քով ամեն ուրիշ տեղերէ աւելի ապահով կըլլաք, և այս տիեզերական վախը միշտ վհուկին հաճոյք կը պատճառէր ամեն տեղ և ամեն անգամ :



վհուկը շատ ժամեր բացակայ դռնուեցաւ . ժամեր՝ որոնք խիստ երկար թուեցաւ խեղճ Մարվինաին մտատանջուելով այն ճակատագրոյն վրայ՝ որուն կ'ըսպասէր . վհուկը քանի մը փողոտեալ տատրակներ և խողկաղիններ ու վայրենի պտուղներ բերաւ իր բնակարանը . չէր աշխատեր երբէք կրակ վառելու և իր որսորդութեան արդիւնքը խորովելու , ինչպէս որ դուք ձեր տուներուն մէջ ընե՞նին կը տեսնէք . ու անիկայ նստաւ պղտի անասնոց արիւնթաթաղ դիակները լափելու :

Մարվինան զգաց իր սրտին ե՛նելը , և երբէք չի կրցաւ պատառ մը առնել այս զղուելի խնջոյքէն . միթէ ինքն ալ անգղի մը մագիլներուն մէջ ընկած խեղճ աղաւնեակ մը չէ՞ր , և միթէ նոյն ճակատագիրը չէ՞ր որ իրեն ալ կ'ըսպառնար . քանի մը կաղնիներով և արմատներով իր անօթութիւնը յագեցընելէն յետոյ աւելի հանդստութիւն մը զգաց . քանզի իր խելացի փոքր հասակաւը միշտ ապառնին կը յարգէր և կը յուսար թէ իր ծառաները վերջապէս զինքը պիտի գտնէին :

Մինչդեռ վիշտն ու տագնապը մեծ էր դղեակին մէջ , հաւատարիմ ստնտուն հազար անգամ պարտեղին և մօտակայ անտառաց ծառուղիներուն մէջ շրջան կ'ընէր և զանոնք իր հե-

ծեծանաց ձայնովը կը թնդացընէր . և խռովեալ ծառաները բոլոր շրջակայ կողմերը դացին զայն բնտուելու . միւս կողմէն բոլոր գիւղաբնակները այս տխուր լրոյն վրայ յանկարծ ձգեցին իրենց աշխատութիւնները այս հիւղական հրեշտակը բնտուելու համար . վասն զի ամենքն ալ Մարվինան կը սիրէին , ինչու որ նա ալ միշտ անոնց կ'օգնէր խեղճութեան ատեննին և զանոնք կը մը խիթարէր իրենց նեղութեանց մէջ . անոնք ճանապարհորդ հովիւներուն կը հարցընէին՝ որոնցմէ ոմանք զայն տեսած էին Ալեքին հետ եղած ատեն , բացի ասկէ ուրիշ որ և է լուր մը առած չէին մէկէ մը : Այս ատենները՝ Սպետը , Լուտովիկ և Ալեքը դղեակը հասան , բայց խիստ շատ զարմացան երբ բոլոր տունը այսպէս խառնաշփոթ վիճակի մէջ գտան և այս տխրութեան պատճառը անմիջապէս հասկըցուեցաւ , վասն զի թերեւս դուք ալ տղաքնե՛ր , կրնաք ճանչնալ որ ասոնք Մարվինաին հայրն ու եղբայրն էին՝ որոնք մեռած կը կարծուէին : Ասոնք Պաղեստինաէն կը վերադառնային . Ալեքը մաղերը կը կորզէր , վասն զի խոստովանեցաւ որ ինքը ակամայ պատճառ եղած էր Մարվինաին թշուառութեանը , այսպէս ուղեց ինքն ալ ընկերանալ իր երիտասարդ տիրոջը , որն որ կորուսեալ գեղեցիկը ուխտեց նաև չի դառնալ դղեակը մինչև

որ Մալվինան գտնելու բաղբը չ'ունենայ :

Վերջապէս մեկնեցան և Լուտովիկին հետ այն ճանքուն հետևեցան՝ ուր երիտասարդ աղջիկանը հետ պտրտած էին . գտան վերստին այն բլուրը՝ ուսկից երբեմն Մալվինան իր հայրն ու եղբայրը նշմարած էր , և ինչպէս որ որսի ատեն սորված էին մացառներ բանալու՝ նոյնպէս ևս դժուարութիւն չի քաշեցին անցուկ ճամբաները լայնցընելու , մանաւանդ որ ոստերը խորտակուած և թարմ խոտերը կոխկրտուած էին թեթև ոտքով մը . անմիջապէս այն խշտեակին քով հասան , յետոյ երևելի լիճին՝ ուր պորը վեհանձնաբար կը լողար իր պարանոցը կրելով ժապաւէն մը՝ որ ընդունած էր իբր վերջին նըուէր իր թշուառ բարեկամուհիէն . Լուտովիկ քակելով զայն , երկիւղածութեամբ պագաւ և նորէն իր տեղը կախեց . յետոյ վհուկին անարգ խրճիթը երևեցաւ անոնց աչքերուն , նաև խըստիւ գոցուած դրան անջրպետէն նշմարեցին Մալվինան՝ որ ծունկի եկած վհուկին առջեւ անոր կ'աղերսէր իրեն խնայելու , վասն զի անոր զարնել կուզէր անիկայ և ակուաներէն բռնելով մազերը կը խզէր . բարկութիւնովսին այլ այլմէ եղած Լուտովիկ և Սլեն , կոտրեցին դուռը ու ներս մտան : Լուտովիկ կտրեց ծեր ու անարգ վհուկին գլուխը՝ մինչգետ Սլեն զայն

կաշկանդած էր իր բազկաց մէջ , այս վայրկեհիս Մալվինան նուաղեցաւ , որն որ անմիջապէս դուրս հանեցին այն պիղծ քարայրէն . Սլեն համբուրեց նորա ձեռքը , և զայն սթափելով սկսաւ խօսիլ անոր իր հօրն ու եղբօրը վրայօք . այս միջոցին Լուտովիկ ալ այն կատաղի շանը դէմ կը կուռէր՝ որն որ իր վհուկ տիրոջը օգնութեան վազած էր , անմիջապէս քաշեց իր դժբեղ նիզակը Լուտովիկ անոր վրայ և զայն իր սրտէն սաստիկ խոցելով փռեց գետինը ու ապա դարձաւ քրոջը քով :

Երբ Մալվինա բացաւ աչքը՝ տեսաւ որ եղբայրը ծուրով իր վրայ խանդաղատանօք կը խօսէր իրեն հետ և զինքը կը դիտէր ամենայն գորովանօք . քիչ ատենէն իր զօրութիւնը վերըստացաւ Մալվինան , և Լուտովիկին ու Սլենին կրթնելով կրկին դղեակին ճանբան բռնեցին :

Երիտասարդին որսորդական ահեղ փողին ձայնէն բոլոր գիւղացիները վազեցին , որոնք միաձայն հաճութեամբ իրենց մանկամարդ բարերարուհին կ'աղաղակէին , և մեծ բերկրութեամբ ուրախացան իրենց հին թշնամի վրհուկին մահուանը վրայ . ուղեցին նաև մինչ իսկ Լուտովիկին ոտքը պագնել . մանաւանդ երբ Սլեն յայտնեց անոնց թէ այդ երիտասարդը իրենց կոմսին որդին է , նոցա ուրախութիւնը


վերջին ծայրը հասաւ . ուզեցին որ հանդէսով բերեն և առանց իրենց հանդէսին միտ դնելու՝ կանանչ ոստեր կտրեցին և անոնցմով գեղջական թիկնաթոռ մը շինեցին , որուն վրայ նստեցընելով լուտովիկը և Մալվինան այնպէսով բերին մինչև դղեակը :

Կոմսը արդէն սուրհանդակով մը ազգարարութիւն էր իր անհամբերութեամբ որդուցը ըսպասելը . ուստի որչա՛փ մեծ եղաւ իր ուրախութիւնը՝ երբ տեսաւ զՄալվինան որ դղեակը կը մտնէր իր եղբօրը առաջնորդութեամբը . ի՞նչ սիրով սեղմեց այս որդին իր սրտին վրայ՝ որն որ հազիւ իսկ կը ճանչնար և որ երջանիկ էր զայն այնչափ գեղեցիկ և բարի գտնելուն համար : Պարտէզին մէջ մեծ սեղան մը պատրաստեցին , ուր բոլոր գիւղացիք բազմեցան ու ազատ խընջոյքով սը գեղջական զուարճութիւն մը ըրին . գաւաթներ կը պարպէին Պաղեստինաէն երջանկութեամբ դարձող պատերազմողաց կենացը համար , նոյնպէս նաև ամենէն աւելի ՚ի պատիւ թշուառաց բարերար Մալվինային :


Մալվինային հայրը զինքը գտնելու երջանկութիւնը արժանապէս տօնախմբելու համար՝ մեծ նուէրներ ըրաւ իր հպատակաց . նոյնպէս Մալվինան ալ իր կողմէն առատ ողորմութիւն բաշխեց կարօտելոց և խղճալեաց , և կրկին վե-

րստացաւ այն անմեղ կեանքը՝ իր հօրը խընամոցը տակ՝ զոր ունէր երբեմն :

Եթէ այս պատմութիւնը ձեզի հաճոյ երևցաւ , սիրուն պատանիք , և կամ առաքինի Մալվինան ձեր սիրտը գրաւեց , ջանացէք ուրեմն դուք ալ անոր նմանելու . նոյնպէս ջանացէք նաև որ ձեր մայրերը վրանիդ համարում ունենան և երջանիկ ըլլան ձեր վրայ նայելով սիրող և դթած եղիք վշտացելոց և թշուառաց համար . երբէք հպարտ և գոռող մի՛ ըլլաք ամբարտաւան տղայոց պէս՝ որոնք միշտ տազնապ կը պատճառեն իրենց մայրերուն . արժանաւոր եղի՛ք դուք ալ Հայ պատանիք մէյմէկ հրեշտակներ ըլլալու ձեր բնակարաններուն մէջ , և ահա այն ատեն Երկինք ձեզ պիտի վարձատրէ և ձեր բարի ու առաքինի անունը պիտի հռչակուի Մալվինայի պէս ամեն ուրեք :



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 15 horizontal lines.



10 —

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL024319

